

տիպողն է բանասիրի այն անկեղծութիւնը՝ որ խուզարկութեանցս ու տեսութեանցս մէջ առաջնորդեց ինձ մինչեւ հոս : Հայ մատաղն ուրեմն զոհ էր . եւ ոչ միայն հայը, այլ երբեմն օտարացն ալ : Եւ այս երկուքն ալ պիտի տեսնենք այժմ անկախ կշռադատութեամբ մը :

1. - Հայոց մէջ: — Ա. Մատաղն՝ ընդհանուր իմաստով՝ մեր քով երկու շրջան ունեցած է, զոր ես կը կոչեմ հին եւ նոր : Այս երկու շրջանք իրարու չեն նմանիր բնաւ : Առաջնոյն մէջ, որ շատ կարճատեւ եղած է, էր բուն իսկ քրիստոնէական նախկին ազապը . բարեգործական սեղան մը, որ կը տրուի հրաւիրողին տանը մէջ՝ նրման սովորական ճաշերու (աստ, 319-20) : Կրօնական որ եւ է յատուկ ծէս չի յիշուիր հող . եւ ոչ ալ մատաղի օրհնութեան առանձին կանոն մը, թէեւ վերջինս հաւանական է (աստ, 330) : Եթէ ծիսական ստգտանելի սովորոյթներ մտած լինէին հող, Մանգակունին՝ որ իւր Զ ճառով մատաղի հանդէսը կը մանրանկարէ, չպիտի ինայէր իւր խարազանը, զոր ամէն տեղ եւ նոյն ճառին մէջ իսկ կը հասցնէ ուրիշ կարգի զեղծմանց դէմ : Կրնանք ուրեմն հետեւցնել՝ թէ այդ շրջանին ազապը դեռ մաքուր էր, զէթ ազգին մեծամասնութեան